ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏԻ

ք. Երևան «16» ապրիլի 2025թ.

2025 թվականի ապրիլի 15-ին հրավիրված էր «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցի վերաբերյալ համապատասխան նյութերը նախապես ներկայացվել էին Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

Օրակարգում ընդգրկված էր հետևյալ հարցը.

1. Մրցութային կարգով ընտրված՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) հաստատում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Դ. Խուդաթյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ
Ա. Ադիլխանյան	ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ
Ե. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ
Ս. Թովմասյան	ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ
Կ. Ցուցուլյան	ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
Ք. Ղալեչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ
Գ. Խաչատրյան	ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, ՀԽ անդամ
Խ. Մկրտչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարի խորհրդական (ճանապարհաշինության ոլորտի մասով), ՀԽ անդամ

Քվեարկությանը չի մասնակցել՝

Ա. Ավանեսյան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ

ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 6-ի N 1298-Ա որոշման հավելվածի 32-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ Հիմնադրամի ՀԽ անդամ է հանդիսանում նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալը (հանրային ներդրումների ոլորտը համակարգող): ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 4-ի N 778-Լ որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության լիազորությունները հանրային ներդրումների ոլորտի համակարգման մասով դադարեցվել են (նշված լիազորությունը վերապահվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը): Նշված հանգամանքով պայմանավորված՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը չի մասնակցել քվեարկությանը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության, որպես Հիմնադրամի ՀԽ անդամի, հետագա մասնակցության վերաբերյալ վերջինիս կողմից ներկայացվելու է գրավոր դիրքորոշում՝ համաձայն ՀԽ քարտուղարի հետ ունեցած բանավոր պայմանավորվածության (Հիմնադրամի կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելու նպատակով):

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 8 կողմ, 0 դեմ:

Հեռակա կարգով քվեարկության արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի աուդիտ իրականացնող անձին (աուդիտորին):

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Դ. Խուդաթյան**

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝ **Ա. Հայրապետյան**